



Ոչ ֆորմալ կրթությունը գործողության մեջ.

Ժողովրդավարության և սոցիալական
ներառման կառուցում



INDEX

I. Ծրագրի մասին:

Ոչ ֆորմալ կրթությունը գործողության մեջ.
Ժողովրդավարության և սոցիալական
ներառման կառուցում.....3

I.1 Համակարգողը և գործընկերները.....5

II. ՈՏԿ (Ոչ ֆորմալ կրթության) ճանաչումը.....7

III. ՈՏԿ-ը և

Արվեստները/Ժողովրդավարությունը/Սոցիալական
ներառումը10

IV. Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության իրականացում
վարժությունները.....12

1. Հայաստան. Համաշխարհային անկախ
երիտասարդական միավորում.....12

2. Ֆրանսիա. Pistes-Solidaires.....21

3. Greece: Mediterranean SOS Network.....32

4 Իտալիա. Centro per lo Sviluppo Creativo
“Danilo Dolci”42

V. եզրահանգումներ.....55

1. Ծրագրի մասին:

Ոչ ֆորմալ կրթությունը գործողության մեջ ժողովրդավարության և սոցիալական ներառման կառուցում Ծրագիրն իրականացվել է Եվրոպական երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորման շնորհիվ, որը հիմնադրվել է Եվրախորհրդի կողմից Եվրոպական երիտասարդական ծրագրերին աջակցելու նպատակով:

Ծրագիրը փորձում է աջակցել երիտասարդների շրջանակում ոչ ֆորմալ կրթության ոլորտում (ՈՖԿ) փորձի վերագգային փոխանակմանը՝ հաշվի առնելով ՈՖԿ կարևորությունը, որպես լրացուցիչ գործիք երիտասարդների կյանքում:

Ծրագրի վերջնական արդյունքը ձեռնարկն է, որի նպատակն է բացահայտել և հաստատել ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության հիմնավորվածությունը: Ձեռնարկը ներառում է ժողովրդավարության և սոցիալական ներառման թեմաներով չորս մեթոդներ/սեմինարներ, որոնք ստեղծվել են ծրագրի չորս գործընկերների կողմից:

Վարժությունների ընթացքում գործընկերներից յուրաքանչյուրը նկարահանել է և նկարներ է պատրաստել, որոնք հավաքված են DVD-ի մեջ և որպես աուդիո-վիզուալ միջոց՝ կցված են ձեռնարկին:

Ծրագրի թիրախային խումբը կազմում են 14-ից 25 տարեկան երիտասարդները: Սեմինարի վերջում ամեն երկրից մեկ մասնակից հարցազրույց է տվել՝ արտահայտելով սեփական կարծիքը իր կյանքում ոչ ֆորմալ կրթության ազդեցության վերաբերյալ: Հարցազրույցը նույնպես ներառված է DVD-ում:

Գործընկերներից յուրաքանչյուրը, օգտագործելով ոչ ֆորմալ կրթության հետ կապված տարատեսակ վարժություններ, ընտրել է տարբեր թեմաներ, ինչպիսիք են

ժողովրդավարություն, սոցիալական ներառում, հարգանք շրջակա միջավայրի նկատմամբ, ավելին գործընկերները ստեղծել են ՈՖԿ-նը համապատասխան միջմշակութային և զգայուն գնահատման գործիք:

Ձեռնարկը ճկուն կառուցվածք ունի, այն կարող է լրացվել և նորացվել նոր մեթոդներով՝ ձեռնարկը և այդպիսի նաև դրա ազդեցությունը բարելավելու համար: Թարմացումները կավելացվեն էլեկտրոնային տարբերակում:

I.I Համակարգողը և գործընկերները Իտալիա.

Centro per lo Sviluppo Creativo “Danilo Dolci”-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ բաղկացած երիտասարդներից և չափահասներից: Հետաքրքրության հիմնական ոլորտն է կրթությունը և փոխաջակցության մոտեցման տարածումը: Կազմակերպությունը ծնվել է մեծ մարդասեր Դանիլո Դոլչիի և նրա համագործակիցների կրթական և աշխատանքային փորձից, ովքեր գործունեություն են ծավալել Պալերմոյին մոտ երկու փոքր քաղաքներում՝ Տոալետոյում և Պարտինիքոյում և Միցիլիայի ողջ շրջանում:

Հայաստան. Համաշխարհային անկախ երիտասարդական միավորումը շահույթ չհետապնդող, ոչ կառավարական կրթական կազմակերպություն է:

Առաքելությունն է մշակույթի, միջազգային ծրագրերի միջոցով քաղաքացիական հասարակության մեջ երկխոսության և համագործակցության մեխանիզմների զարգացումն ու տարածումը, աջակցությունը «խաղաղության մշակույթի» ամրապնդմանը տարածաշրջանում և աշխարհում:

Ֆրանսիա. PisteSolidaires-ը 2002թ. հիմնադրված կազմակերպություն է, որի առաքելությունն է երիտասարդների փոխանակման և հանդիպման իրախոսումը հետևյալ միջոցներով՝ փորձի փոխանակում, երիտասարդական փոխանակումների ցանցի ստեղծում, սպառման նոր ձևերի տարածում և դրանց մասին տեղեկատվության տարածում, կրթություն ցանկացած ժամանակ և ցանկացած տարիքում:

Հունաստան. **Mediterranean SOS-ը** շրջակա միջավայրի և սոցիալական խնդիրներով զբաղվող հունական ՀԿ է, որն ակտիվ է 1990 թ.-ից ի վեր Միջերկրական ծովի տարածքում բնական և մշակութային ժառանգության պաշտպանության և կայուն զարգացման աջակցման, ինչպես նաև տարածաշրջանի մարդկանց միջև երկխոսության աջակցության համար:

II. ՈՖԿ (Ոչ ֆորմալ կրթության) ճանաչումը

1960-ականներին կյանքի բոլոր ոլորտների զարգացման միտումների արագացման և սոցիալական հարաբերություններում խորքային փոփոխությունների հետ մեկտեղ, «ոչ ֆորմալ կրթության» կոնցեպտը մուտք գործեց կրթական ոլորտ: Հետագայում, եվրոպական երկրները որդեգրեցին ոչ ֆորմալ կրթության հասկացությունները և ռազմավարական նախագծերը:

ՈՖԿ-ը կրթության յուրահատուկ ձև է, որը թույլ է տալիս զարգացնել հմտություններ, կարողություններ և գիտելիքներ մշտապես փոփոխվող սոցիալական և շրջակա միջավայրի պահանջներին կամ/և պայմաններին համապատասխան: ՈՖԿ-ն գլխավոր նպատակը կրթության ոլորտում դարի այնպիսի մարտահրավերներին համարժեք պատասխանների որոնումն է, ինչպիսիք են սոցիալական և քաղաքացիական մասնակցության նվազումը, տեղեկատվական հասարակության պահանջները, միջազգային ինտեգրացիան, գլոբալիզացման գործընթացների տարածումը և գնալով խորացող տարբերությունը տնտեսության համակարգային փոփոխությունների և ներկայիս ֆորմալ կրթական համակարգի միջև:

ՈՖԿ-ը Ֆորմալ կրթության հետ մեկտեղ, մանկությունից մինչև հասուն տարիք ցանկացած մարդու կրթական անցման մասն է կազմում: Երկու մեթոդաբանությունները հավասարակշռում են մեկը մյուսին, քանի որ գործ ունեն կրթության տարբեր ոլորտների հետ: Գլխավոր տարբերությունն այն է, որ մինչդեռ ֆորմալ կրթությունը հատուկ մեթոդաբանություն է, որը կիրառվում է ինստիտուցիոնալ դպրոցական համակարգում, ՈՖԿ-ը

կարող է օգտագործվել շատ այլ կոնտեքստներում, առավել հաճախ ՀԿ ոլորտում, ասոցիացիաներ, աշխատանքային միջավայր: Այնուամենայնիվ, վերջին տարիներին, երկու կրթական մոտեցումներն էլ փոխանակում են միմյանց հետ որոշակի գործիքներ, այսպիսով որոշ երկրներում մենք կարող ենք տեսնել, որ ՈՖԿ-ը հաջողությամբ օգտագործվում է ինստիտուցիոնալ կոնտեքստներում (դպրոց/համալսարան):

Մենք կարող ենք ամփոփել երկու մեթոդաբանությունները հետևյալ կերպ՝

Ասպեկտներ	Ոչ ֆորմալ կրթություն	Ֆորմալ կրթություն
Միջավայր	ՀԿ ոլորտ, ասոցիացիաներ, աշխատանքային միջավայր և այլն:	Ինստիտուցիոնալ համակարգեր (դպրոց/համալսարան) :
Մեթոդաբանություն	Հիմնված է ակտիվ և համագործակցային ուսուցման ու փորձառության և կամավորության վրա:	Ֆրոնտալ ուսուցում, արտաքին մոտիվացիա:
Վկայականի հանձնում	Հաճախ վկայական չի տրվում:	Դիպլոմ և ճանաչված որակավորում:
Բովանդակություն	Սովորեցնող վարժությունների տարբեր ոլորտներ:	Կոնկրետ առարկաներ:

Տևողություն	Կրթություն ողջ կյանքի ընթացքում:	Մինչև դպրոցի/համալսարանի ավարտը:
Ով է մանկավարժը	Յուրաքանչյուր մասնակից կարող է լինել մանկավարժ, քանի որ օգտագործվում է համագործակցային ուսուցումը:	Ուսուցիչն է, նա օգտագործում է ուսումնական պլանը, որը դպրոցական համակարգը և կառավարությունը մշակել են հատուկ նպատակներով:
Սովորելու ձևը	Սովորելն ինքնուրույն է կատարվում՝ ուշադրությունը կենտրոնացնելով սովորողների պահանջների վրա:	Սովորելը պարտադիր է, սովորողը չի կարող ընտրել, թե ինչ սովորի, ոչ էլ կարող է ազդեցություն ունենալ ուսուցման գործընթացի վրա. ուսուցչի և սովորողի միջև հաստատված աստիճանակարգությունն է:
Նպատակները	Հմտությունների զարգացում, որոնք սովորողը կպահպանի և կզարգացնի ողջ կյանքի ընթացքում:	Կարողությունների և գիտելիքների զարգացում, որոնք ստուգվում են ուսուցման գործընթացի վերջում

II. ՈՖԿ-ը և Արվեստները / Ժողովրդավարությունը / Սոցիալական ներառումը

ՈՖԿ-ը ֆորմալ և ինֆորմալ կրթության հետ մեկտեղ ունի առանցքային դեր ուսուցման գործընթացում, որոշակի կարևոր կրթական սկզբունքների տարածման մեջ, ինչպիսիք են կրթությունը ժողովրդավարական քաղաքացիության, մարդու իրավունքների, միջմշակութային երկխոսության վերաբերյալ՝ նպատակ ունենալով հաստատել ժողովրդավարություն և սոցիալական ներառում: Արվեստն ամենաբժեքավոր ոլորտներից մեկն է, որտեղ ՈՖԿ-ը հրաշալի արդյունքներ է ցույց տվել սոցիալական փոփոխության, վերաբերմունքի, վարքի և այլ գործընթացների ուժեղացման ուղղությամբ:

Հատկապես թատրոնը փորձարկվել է շատ եղանակներով, որպես գործիք տարբեր ոլորտներում աշխատելու համար, ինչպիսիք են սոցիալական, կրթական, առողջապահական, լեզվական, կոնֆլիկտի ձևափոխման ոլորտները: Թատրոնը հաճախ հասարակության համար ծառայել է որպես մի վայր, որտեղ մարդիկ վկա են եղել իրենց սեփական կոնֆլիկտներին և անդրադարձել են հնարավոր լուծումներին:

Մասնակցային թատրոնը նման ներուժի լավ օրինակ է: Հիմքերը գալիս են Ճնշվածների թատրոնից (սոցիալական թատրոնի ձև), որը ստեղծվել է Աուգուստո Բոալի կողմից (հավելյալ տեղեկատվության համար՝ www.theatreoftheoppressed.org): Մասնակցային թատրոնի ներկայացումները հնարավորություն են տալիս համայնքներին միասին ակտիվորեն մտորել՝ օգտագործելով բեմը՝ որպես ապրելու նոր ձևերի բացահայտման և ապագայի տեսլականների արտահայտման վայր:

Դրվագների արարումը ազատորեն է կատարվում, և ամեն ոք կարող է առավել խնդրահարույց սարքել դրվագը, առաջարկություններ ներկայացնել, կերպարներ ավելացնել: Նպատակն է հասնել մի դրվագի, որը բոլորի վրա ազդեցություն կունենա և կմեծացնի սոցիալական փոփոխության ցանկությունը:

Տորում թատրոնը, որը կրկին սկիզբ է առնում Ճնշվածների թատրոնից, կարող է համարվել սոցիալական խնդիրների վերաբերյալ մտային գրոհի ձև: Սոցիալական կոնֆլիկտ խաղալով (օրինակ՝ դպրոցներում վախեցման խնդիրը) հանդիսատես-դերասաններին դիմում են հասարակության հետ համագործակցության և բոլորի մասնակցության միջոցով ստեղծագործ լուծումներ գտնելու առաջարկով. մի բան, որը խրախուսում է սոցիալական ներառման գործընթացը:

Երաժշտությունը նույնպես հաջողությամբ օգտագործվում է որպես սոցիալ-մշակութային ներառման գործիք, մարդկանց մեջ տարբեր մեխանիզմների արթնացման իր ուժին համապատասխան, որոնք օգնում են մարդկանց, բարելավում են ինքնաընկալումը և ուրիշների հետ հարաբերությունները: Երաժշտությունը հնարավորություն է տալիս արտահայտել ներքին ամենուժեղ զգացումները և դուրս հանել ամենալավը, որ նրանք ունեն իրենց ներսում:

Սա շատ կարևոր մեկնակետ է սոցիալական ներառման և ժողովրդավարության գործընթացի համար. ՈՏԿ-ն մեթոդաբանությունը իր բոլոր ասպեկտներով հնարավորություն է տալիս բոլորին արտահայտվել, ինչը նշանակում է բարելավել գիտելիքները սեփական անձի վերաբերյալ և հետևաբար գիտելիքները այլոց մասին, որպես հիմնարար քայլ դեպի միջմշակութային երկխոսությունը և,

այդպիսով, դեպի ժողովրդավարություն և սոցիալական ներառում:

IV. Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության իրականացում՝ վարժությունները

Հետևյալ վարժությունները մշակվել են գործընկերներից յուրաքանչյուրի կողմից ընտրված թեմային համապատասխան: Դրանք ՈՖԿ-ն կիրառման օրինակներ են երիտասարդ թիրախային խմբի նկատմամբ սոցիալական ներառման նպատակով, որը կարող է տարբեր եղանակներով մեկնարկել:

1) Հայաստան. Համաշխարհային անկախ երիտասարդական միավորում

Կոնֆլիկտի ID-ին

Թեմաները: Կոնֆլիկտի կանխարգելում և լուծում

Բարդությունը: 1-ին աստիճան

Խմբի անդամների թիվը: Ցանկացած

Ժամանակը: 60 րոպե

Համառոտ նկարագիրը: Սա քննարկում-վարժություն է, որի ժամանակ մասնակիցները հետազոտում են միջանձնային կոնֆլիկտների իրենց փորձը: Կոնֆլիկտի ID-ին օգնում է պակասեցնել հուզական լարվածությունը, ինչպես նաև բացահայտել խնդրի բաղադրիչները, այնպես, որ մենք կարողանանք խնդիրները լուծելու ուղիներ մշակել

Նպատակները: Զարգացնել կոնֆլիկտի լուծման հմտություններ, Օգտագործել և զարգացնել արդյունավետ որոշումների ընդունման և վերլուծական մտածողության հմտությունները, Զարգացնել ճգնաժամի կառավարման

հմտություններ, Տարածել համերաշխության և պատասխանատվության արժեքները:

Նյութեր/ Նախապատրաստում: Առձեռն նյութեր և գրիչներ
Ցուցումներ: Բացատրել, որ սա անհատական առաջադրանք է և ոչ խմբային, Խնդրել մասնակիցներին կենտրոնանալ մեկ ընթացիկ կոնֆլիկտային իրավիճակի վրա, որում նրանք այժմ գտնվում են: Կոնֆլիկտը հասկանալու համար (առավել հեշտ է սկսել միջանձնային կոնֆլիկտից) բոլորի համար պետք է պարզ լինի, թե ինչ հետ գործ ունենք, Ամեն մասնակից ստանում է “Կոնֆլիկտի ID-ի” հարցաթերթը՝ 20-30 րոպեներում լրացնելու համար, Վարժության վերջում խումբը պետք է համախմբվի և միասին արտահայտի հուզական, ինտելեկտուալ և այլ խնդիրները, որոնք առաջացան առաջադրանքում: <http://danilodolci.org/?p=14>

Վերլուծություն և գնահատում: Սկսել հենց վարժության մասին կարճ քննարկումով և արդյո՞ք այն բարդ էր, թե՞ ոչ և ինչու՞ : Այնուհետև վերլուծել կոնֆլիկտային իրավիճակների պատճառները և հետևանքները: Խնդրել կամավորներին տրամադրել իրենց “Կոնֆլիկտի ID-ն” ընդհանուր քննարկման համար: Թույլ տալ նրանց ասել, թե ինչ տեղի ունեցավ և ինչպես են իրենք զգում դրա հետ կապված և այնուհետև բացել քննարկումը բոլորի համար:

1. Ինչու՞ կոնֆլիկտային իրավիճակները տեղի ունեցան:
2. Ինչպե՞ս այլ մասնակիցները կվարվեին նմանատիպ իրավիճակում: Ինչու՞ :
3. Ինչպե՞ս դու կարող էիր այլ կերպ վարվել: Արդյո՞ք մասնակիցները ունեն այլ առաջարկություններ:
4. Արդյո՞ք հնարավոր էր կանխարգելել կոնֆլիկտները:
5. Արդյո՞ք համերաշխության և պատասխանատվության արժեքների

Խորհուրդներ դասընթացավարներին: Դասընթացավարը պետք է ստեղծի աշխատանքային մթնոլորտ, տրամադրի

բավարար տարածք յուրաքանչյուր մասնակցի
հարմարավետ և կենտրոնացված աշխատանքի համար:

Գանձերի տուփը

Թեմաները: Մասնակցություն, քաղաքացիություն, ժողովրդավարություն

Բարդությունը: 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 20-30

Տևողությունը: 120 րոպե

Համառոտ նկարագրիրը: Մա անարդարացի հասարակության մոդելավորում է, որում երեք սոցիալական խմբեր փորձում են գտնել բարօրության համար ընդհանուր հիմքեր՝ բացահայտել խնդիրներ, որոնք առնչվում են՝, Հավասարության իրավունքի և խտրականության հետ, Ինչպե՞ս պահանջել իրավունքի իրագործումը:

Նպատակները: Խթանել պատասխանատվության, համերաշխության, արդարության և հավասարության զգացողությունները: Խթանել մարդու իրավունքների ակտիվությունը: Ջարգացնել քննադատական մտածողություն խնդիրների բարդության վերաբերյալ: Նյութեր/ Նախապատրաստում: 3 սենյակներ (ցանկալի է մեկը վատ վիճակում), Նյութեր (ինչպիսիք են քաղցրավենիք, ծաղիկներ), որպեսզի սենյակներից մեկի մթնոլորտը փոխել առավել լավի, քան մյուս երկու սենյակներինը, Մեկ արկղ, Խմբերի համար ցուցումները (1 օրինակ A խմբի համար, 5 օրինակ B խմբի համար և 7-9 օրինակներ C խմբի համար), Խաղաքարտեր: Պատրաստե՛ք խաղաքարտերը, որպեսզի յուրաքանչյուրի համար մեկ խաղաքարտ լինի, հանած 4 խաղաքարտ, օգտագործե՛ք միայն սրտերը և քարփինջները (ագուռ), բայց այնպես, որ քարփինջները պետք է ավելի մեծ խումբ կազմեն, քան սրտերը (2-3 հոգի):

Ցուցումներ: Խնդրել բոլոր մասնակիցներին արկղի մեջ դնել ամենաարժեքավոր իրերը, որոնք իրենք ունեն իրենց հետ այս պահին: Ընտրել 4 հոգու, ովքեր պետք է լինեն A խմբում

(մարդիկ, ովքեր արտիստիկ են և խմբի առաջնորդներն են):
 Բաժանե՛ք մնացած մասնակիցներին երկու
 խմբերի՝ փոխարենը <http://danilodolci.org/?p=11>
Վերլուծություն և գնահատում: Մասնակիցներին սկսե՛ք
 հարցնել, թե ինչ տեղի ունեցավ և ինչպիսին էին իրենց
 զգացողությունները վարժության վերաբերյալ և այնուհետև
 շարունակե՛ք խոսել բարձրացված հարցերի մասին և այն
 մասին, թե իրենք ինչ սովորեցին: Քանի որ խաղը շոշափում է
 զգացմունքային ոլորտը, անդրադարձե՛ք իրական կյանքում
 տեղի ունեցող խտրականության և անարդարության
 զգացմունքային կողմին, որը կրկնօրինակվել է խաղում:
 Դուք կարող եք ավելին հարցնել՝
 Արդյո՞ք որևէ մեկն ունեցել է բացասական
 զգացողություններ: Ի՞նչը պատճառ հանդիսացավ:
 Ինչպե՞ս իրեն զգաց A խումբը, երբ ստացավ գանձերի տուփը
 և իշխանություն:
 Ինչպե՞ս իրեն զգաց B խումբը, երբ հայտնվեց դժվար
 կացության մեջ:
 Խաղի ո՞ր ասպեկտներն են շաղկապվում իրականության
 հետ:
 Ձեր հասարակությունում ո՞ր խմբերն են գտնվում B և C
 խմբերի իրավիճակում:
 Ո՞ր իրավիճակներում են գոհերը մեղադրվում իրենց
 դրության համար:
 Ի՞նչ պետք է արվի խաղի կանոնները փոխելու համար:
 Ի՞նչ պետք է արվի՝ լավացնելու համար մեր
 հասարակություններում արդարության իրավիճակը:
Հետագա քայլերի առաջարկներ: Ավելի խորը բացահայտե՛ք
 խտրականությունը և այլ խնդիրներ, որոնք կարող են
 առաջարկվել (ագրեսիա, բռնություն). Հրավիրե՛ք առավել
 խոցելի սոցիալական խմբերի հետ աշխատող
 կազմակերպության ներկայացուցչի, ով կխոսի խմբի հետ:

Օտարումը ճակատագիր չէ

Թեմաները: Սոցիալական ներառում, կարծրատիպեր

Բարդությունը: 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: Ցանկացած

Ժամանակը: 20-60 րոպե

Համառոտ նկարագիրը: Այս վարժությունը նմանակում է (սիմուլյացիա) է, որն առնչվում է հետևյալ խնդիրներին՝, հաշմանադամության և հատուկ կարիքներ ունեցող մարդկանց վերաբերյալ կարծրատիպեր, սոցիալական ներառման խնդիրներ

Նպատակները: Ավելացնել հասարակությունից օտարված երիտասարդների հնարավորությունները, Առաջացնել կարեկցանք և հանդուրժողականություն, Ազդել կարծրատիպային կադապարների վրա, Վերլուծել մեր վերաբերմունքը օտարման և մեկուսացման վերաբերյալ:

Ցուցումներ: Այս վարժությունը բաղկացած է երեք մասից՝ առաջին մասում կիսվում ենք նախադեպերի վերաբերյալ (15-20 րոպե), երկրորդ մասում ծանր իրավիճակի նմանակում և երրորդ մասում նախադեպի նմանակում՝ որպես ոչ ճակատագրական իրավիճակ:

- Մասնակիցներին բաժանե՛ք փոքր խմբերի (նախընտրելի է ոչ ավելին, քան 6 մասնակից յուրաքանչյուր խմբում):
- Խնդրե՛ք յուրաքանչյուր խմբին, որ իրենց իսկ կյանքից որևէ երիտասարդի կամ խմբի օտարման կամ մեկուսացման նախադեպ գտնեն:
- Խմբերից յուրաքանչյուրը նախադեպի նմանակում է պատրաստում՝ որպես ծանր իրավիճակ:
- Խմբերից յուրաքանչյուրը միևնույն նախադեպի նմանակում է պատրաստում՝ որպես ոչ ճակատագրական իրավիճակ:

• Դասընթացավարն ինքը պետք է որոշի, թե որքան կլինի նմանակման տևողությունը՝ դեպքերի զարգացումից կախված՝ 15 թույլն հարմար ժամանակահատված է:

• Խաղավարտն ազդարարաբե՛ք հստակ:

Վերլուծություն և գնահատում: Քննարկումը սկսե՛ք

դերասաններին հարցնելով, թե ինչ զգացողություններ ունեն:

Այնուհետև հարցրե՛ք յուրաքանչյուրին, թե ում կյանքից էր վերցված նախադեպը և ինչ սովորեցին: Կարևոր է լսել այն մարդու կարծիքը, ով բախվել է օտարման և ունեցել է հնարավորություն ակնաստես լինելու օտարման երկու եղանակների:

Հավելյալ դուք կարող եք հարցնել՝

- Նմանակումը փոխե՞լ է ձեր վերաբերմունքը օտարման վերաբերյալ: Եթե այո, ապա ինչպես:

- Չի՞ թվում արդյոք, որ խնդրի մասին բարձրաձայնելու և տեղում գործընկերների հետ քննարկելու միջոցով իրական դերակատարների վարքը բացատրելու նպատակով ի հայտ են գալիս ամենակոնֆլիկտային իրավիճակների նոր բնորոշ գծեր:

- Ո՞րն է առաջին քայլը, որի միջոցով հնարավոր կլինի հաղթահարել օտարումը և մեկուսացումը և ո՞վ պետք է այդ քայլն անի:

Դուրս մնալու պատճառ չկա

Թեմաները: Քաղաքացիություն, մասնակցություն և ժողովրդավարություն

Բարդությունը: 1-ին աստիճան

Խմբի անդամների թիվը: 16-20

Ժամանակը: 60-90 րոպե

Համառոտ նկարագրիր: Այս վարժությունը քաղաքացիական մասնակցությանը նպաստող վերաձևավորող վարժություն է:

Նպատակները:

- Գնահատել քաղաքացիական մասնակցությունը,
- Առաջացնել հետաքրքրություն և շահագրգռվածություն դեպի ժողովրդավարական մասնակցությունը,
- Օգնել մասնակիցներին հաղթահարել քաղաքացիական ակտիվ մասնակցության հետ կապված ներքին խոչընդոտները, վախը և անորոշությունը:

Նյութեր/ Նախապատրաստում:

- Թղթի մեծ թերթ կամ գրատախտակ (Ֆլիպչարթ)
- Գունավոր նշագրիչներ (մարկերներ)
- Մկրատ
- Կպչուն թուղթ
- Որևէ այլ պարագա, որը կնպաստի ստեղծագործ աշխատանքին, առավելություն է:

Ցուցումներ:

- Բաժանե՛ք խումբը զույգերի:
- Խնդրե՛ք յուրաքանչյուր զույգին, որ միմյանց 10 րոպե պատմեն իրենց մասին՝ կենտրոնանալով բնավորության որևէ գծի կամ սովորության վրա, որը նրանք բացասական են համարում կամ որը խոչընդոտում է նրանց քաղաքացիական ակտիվ մասնակցությանը:
- Այնուհետև 20 րոպեի ընթացքում յուրաքանչյուր զույգ բնավորության տվյալ բացասական գծի կամ սովորության

վերաբերյալ տեսակետները պետք է ներկայացնի դրական տեսանկյունից:

• Բնավորության վերասահմանված գիծը կամ սովորությունը կներկայացվի խմբի մյուս անդամներին ստեղծագործ եղանակով՝ դա կարող է լինել երգ, նկար, պաստառ և այլն: Վարժության հաջողությունը պայմանավորված է մասնակիցների միմյանց հանդեպ ունեցած ապրումակցման (կարեկցանք) աստիճանով:

Վերլուծություն և գնահատում: Մկսե՛ք քննարկումը՝ հարցնելով մասնակիցներին, թե ինչ զգացողություններ ունեին վարժության կատարման ընթացքում, իսկ հետո խոսեք այն մասին, թե նրանք ինչ են սովորել:

Կարող եք նաև հարցնել՝

- Դժվա՞ր էր արդյոք որոշել, թե որոնք են բնավորության ամենակարևոր գծերը կամ սովորությունները, որոնք ստիպում են նրանց հրաժարվել իրենց իրավունքներից:

- Չարմացա՞ծ էին արդյոք մասնակիցները տեսնել, որ իրենց բնավորությունը կամ սովորությունները քաղաքացիական մասնակցության պոտենցիալ շարժառիթներ են:

- Կայի՞ն արդյոք մյուս մասնակիցների բնավորության գծեր կամ սովորություններ, որոնք զարմացրեցին իրենց:

Խորհուրդներ դասընթացավարներին: Որպես վարժության հետագա շարունակություն՝ կարող եք մասնակիցներին առաջարկել պատրաստել այնպիսի պաստառներ, որոնցում վերաձևավորումը երիտասարդների մասնակցության և քաղաքացիության շարժառիթ կհանդիսանա:

2) Ֆրանսիա. Pistes Solidaires.

Վարժությունների հետևյալ չորս տեսակները մեկ սեմինարի մաս են կազմում, որի նպատակն է անդրադառնալ կայուն զարգացման խնդրին՝ ոգևորելով մասնակիցներին զարգացնել որոշակի գաղափարներ և գործողություններ կայուն ապագայի համար: Դրան կհասնենք սեփական գաղափարների, զգացմունքների և գործողությունների հստակեցմամբ: Դա կքննարկվի խմբի մեջ տարբեր միջոցներով՝ նկարներ, նկարելը, խաղալը և շփումը բնության հետ: Այս վարժությունները ներգրավված մարդկանց թույլ կտան լիարժեք մասնակցել, քանի որ թեման դեկավարվում է հենց իրենց իսկ գաղափարներով:

Photolangage

Թեմաները: Պատասխանատու սպառում, ջրի ծախս, էնեզիայի տեղափոխում, հագուստ և սնունդ

Բարդությունը: 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 8-ից 15 հոգի

Ժամանակը: 2 ժամ 30 րոպե

Համառոտ նկարագիրը: Photolangage-ը բաղկացած է երեք փոխլրացնող տարրերից՝ անհատական արտահայտվելը, ուշադիր լսելը և լուսանկարչական լեզուն: Դա ենթադրում է վիզուալ լեզվի ինտեգրումը, որպես նոր արտահայտության հնարավորություն, և այդպիսով ենթադրում է լուսանկարին նայելու նոր ձև, անկախ այն բանից յուրահատուկ է այն, թե ոչ: Եղանակը օգտագործվում է խմբերով աշխատելու համար, այդպիսով այն փոխազդում է այլ ֆիզիկական

գործընթացների հետ, որոնք ևս խրախուսվում են խմբում անդամների փոխներգործությամբ:

Photolangage-ի միջոցով խմբի յուրաքանչյուր անդամ, ընտրելով մեկ կամ մի քանի լուսանկար, պետք է փորձի իր խմբի առջև արտահայտել որոշակի տեսակետներ իր սեփական փորձից, որոնք կապված կլինեն թեմայի՝

«Պատասխանատու սպառման» հետ:

Լուսանկարը դառնում է միջոց, որը թույլ է տալիս սեփական տեսակետները, փորձը և գաղափարները ավելի հեշտ կլիսել այլ մարդկանց հետ համընդհանուր իրադրություններում:

Նպատակները:

- Բացահայտել, սովորել, կենտրոնանալ թեմայի՝

«Պատասխանատու սպառման» վրա,

- Խրախուսել արտահայտությունները թեմայի՝

«Պատասխանատու սպառման» վերաբերյալ,

- Բարելավել հաղորդակցական ունակությունները,

- Ճանաչել միմյանց հարգանքի և ներառման հիմքի վրա,

- Միմյանց հետ կլիսել սեփական փորձն ու գաղափարները:

Նյութեր/ Նախապատրաստում:

- 30 լուսանկար (գունավոր կամ սև և սպիտակ) կամ նկարներ թերթերից կապված թեմայի հետ՝ «պատասխանատու սպառում»

- մեկ սեղան

- մեկ ստվարաթուղթ

- թղթեր/գրիչներ/նշագրիչներ (մարկերներ)

Ցուցումներ:

Photolangage-ի ընթացքը բաղկացած է առնվազն երեք քայլից՝

1. Խմբին աշխատանքին ծանոթացնելը և աշխատանքը ներակայացնելը (մոտավորապես 10 րոպե)

2. Լուսանկարների անհատական ընտրություն (5-ից 10 րոպե)

3. Խմբային աշխատանք (1-ից 2 ժամ)

- Խումբը նստում է շրջանաձև:
- Դասընթացավարը ներկայացնում է Photolangage-ի մեթոդը և բացատրում, թե ինչպես է աշխատանքը ընթանալու: Նա պետք է պարզ բացատրի կատարվելիք աշխատանքը, ներկայացնի ժամանակի սահմանափակումները և տա հստակ հրահանգներ:
- Դասընթացավարը լուսանկարները դնում է սեղանին և մասնակիցները ազատ կարող են տեղաշարժվել՝ ուսումնասիրելով լուսանկարները, յուրաքանչյուրը առանձին-առանձին:
- Դասընթացավարը խնդրում է մասնակիցներին ընտրել մեկ լուսանկար, որը կապված է «պատասխանատու սպառման» թեմայի հետ: Նրանք կարող են ընտրել միևնույն լուսանկարը:
- Երբ մասնակիցները վերջացնում են իրենց ընտրությունը, նրանք վերցնում են լուսանկարը և իրենց հետ բերում շրջան:
- Խմբային աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր անդամը պետք է բացատրի իր ընտրությունը:
- Դասընթացավարը նշում է հինական բառերը, որ յուրաքանչյուր մասնակիցն օգտագործում է:
- Խմբային աշխատանքը սկսվում է: Եվս հինգ ներկայացուցիչ լուսանկարներ են ընտրում (արդեն ընտրված նկարների միջից) ամբողջ խմբի կողմից և դրանք փակցվում են ստվարաթղթի վրա,
- Ստվարաթղթի վրա մասնակիցները նաև գրում են այն հինական բառերը, որոնք արդեն նշել էր ղեկավարը, որպեսզի այս անդրադարձման փուլի վերաբերյալ վիզուալ պատկեր կազմեն:

Վերլուծություն և գնահատում: Վերլուծության և անդրադարձման փուլ. խմբի անդամները կարող են արտահայտել իրենց տպավորությունները մեթոդի և այն

մասին, ինչ որ ասվել է: Դասընթացավարը հարցնում է, թե ի՞նչ էին նրանք զգում լուսանկարներով աշխատելիս, ի՞նչ դա արթնացրեց նրանց մեջ, ի՞նչ է դա նրանց համար նշանակում: Բոլորը կարող են ազատորեն խոսել, դասընթացավարը պետք է ապահովի, որ խմբի յուրաքանչյուր անդամ արտահայտվի առանց մյուսի կողմից ընդհատվելու:

Խորհուրդներ դասընթացավարներին: Դասընթացավարը պետք է ակտիվացնի մասնակիցներին և արթնացնի նրանց հետաքրքրասիրությունը: Ժամանակի վերաբերյալ պարզ ու հստակ ցուցումները, աշխատելու եղանակները, քայլ առ քայլ ընթացակարգը թույլ կտան ունենալ ավելի արդյունավետ մասնակցություն և խմբային ինքնավարություն: Նա պետք է հստակ իմանա, որ բոլորը հասկացել են կատարվելիք աշխատանքը: Նրա դերը առաջնային է և ավելի շատ լսողի դերում է: Նա օգնում է, որ խմբում միմյանց լսեն: Նա չպետք է դատի, քննադատի կամ ակնարկներ անի այն ամենի մասին, ինչ ասվել է, նա պետք է խմբի յուրաքանչյուր անդամին օգնի արտահայտվել և վստահ լինի, որ յուրաքանչյուր անդամը մյուսների նկատմամբ ուշադրություն և ըմբռնում է դրսևորում: Քանի որ լուսանկարը օգնում է անհատական արտահայտությանը, դասընթացավարը պետք է վստահ լինի, որ հարցի շրջանակը խախտված չէ: Անհրաժեշտության դեպքում նա հրավիրում է մասնակիցների ուշադրությունը: Տարբերակներ: Մասնակիցները կարող են ունենալ թեմատիկան ընտրելու առաջադրանքը, ինչպես նաև կարող են հենց սկզբում ընտրել դրա հետ կապված մի քանի լուսանկարներ:

Երազանքը նկարի մեջ

Թեմաները: Կայուն զարգացում

Բարդությունը: 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 10-15

Ժամանակը: 1ժ 30ր

Համառոտ նկարագիրը: Այս վարժությունն առաջարկում է մասնակիցներին երազել իրենց տեղանքի համար առավել լավ ապագայի մասին՝ թույլ տալով նրանց սեփական մտքերը կենտրոնացնել կայուն ապագայի վրա: Վարժության ընթացքում երևան կգան մարդկանց համար առաջնային խնդիրները, իրականում կիրառվելիք կոնկրետ ռազմավարությունների հետ մեկտեղ: Երևակայելու գործընթացը մարդկանց հնարավորություն է տալիս կայունության իմաստալից մեկնաբանության մեջ ներառվել՝ կապելով այդ տեղեկատվությունը ապագայի համընդհանուր տեսլականի հետ:

Ավարտելուց հետո, մենք կարող ենք առաջ քաշել երկրորդ հարցը: Ո՞ր գործողությունը կարող ենք մենք համարել որպես առաջին փոքր քայլը՝ միտված երազանքների իրականություն դառնալուն:

Մա ուղղորդում է դեպի վարժության երկրորդ մասը, որի անունն է “Դարձնել երազանքներն իրականություն”:

Նկարչության միջոցով մասնակիցները կարող են պատկերացնել որոշ գործողություններ, որոնք ապագայում կյանքի որևէ բնագավառին կվերաբերվեն՝ հասարակություն, մշակույթ, տնտեսություն, շրջակա միջավայր:

Նպատակները:

- Խորացնել և բացահայտել կայուն զարգացման թեման,
- Օգնել մարդկանց հայտնաբերել իրենց հավանական և ցանկալի ապագան և բացահայտել հավատալիքները և եզրակացությունները, որոնք հիմք են

Նյութեր/ Նախապատրաստում:

- Շարժեր, հագուստներ կամ ցանկացած այլ իր, որը մասնակիցները կարող են օգտագործել իրենց աչքերը ծածկելու համար,
- Նկարչական նյութեր՝ մատիտներ, գունավոր գրիչներ,
- “Երազանքի էջի” տպած տարբերակ բոլոր մասնակիցների համար:

Ցուցումներ:

Քայլ 1 – Երազելու փուլ

1. Ծածկե՛ք ձեր աչքերը և ազատե՛ք ձեր միտքը:
2. Խնդրեմ հիմա սկսե՛ք երազել այն փոփոխության մասին, որ ուզում եք տեսնել ձեր քաղաքում:
3. Ընտրե՛ք մի խնդիր, որը հոգեհարազատ է ձեզ (սնունդ, դեղորայք և առողջություն, կրթություն, բազմազանություն...):
6. Մտածե՛ք 25 կամ 50 տարի առաջ դեպի ապագա:
7. Մի՛ մտածեք գործնականորեն, թե ինչպես կարող է այս երազանքը իրականություն դառնալ:
8. Մի քանի բոլոր տրամադրե՛ք այն ձեր մտքում անցկացնելու համար:

• Քայլ 2 – Ձեր երազանքի ներկայացումը “Երազանքի էջում”
Խնդրում ենք լրացնել ձեր “Երազանքի էջը”՝ մեկ նախադասություն, որն ընդհանրացնում է ձեր երազանքը. նկար, որը ներկայացնում է ձեր երազանքը. հինգ հիմնական բառեր, որոնք դուք զուգորդում եք ձեր երազանքի հետ:

• Քայլ 3 – Մեր երազանքների ներկայացնելը

1. Յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է տրվում ներկայացնել իր երազանքն ամբողջ խմբին,
2. Խմբերի առաջնորդներն այնուհետև կարող են ամփոփել երազանքերը՝ մատնանշելով թեմաները, որոնք մասնակիցների համար համընդհանուր էին:

• Քայլ 4 –Քննարկումներ

Քննարկումները տարբեր են խմբից խումբ, տեղայնքից տեղայնք, տարիքից տարիք: Դուք, իհարկե, ազատ եք երազանքների մասին քննարկումն իրականացնել, ինչպես առավել ճիշտ եք համարում (Տեսե՛ք տարբերակները ստորև):

Վերլուծություն և գնահատում:

- Հարցրե՛ք մասնակիցներին ինչպիսին էին իրենց զգացողությունները այս վարժության հետ կապված, և այնուհետև շարունակե՛ք խոսել առաջ քաշված խնդիրների մասին և թե՛ ինչ իրենք սովորեցին:

- Հարցրե՛ք՝ արդյոք իրենք գտնում են, որ այս մեթոդը պարզ է և հեշտ և արդյոք իրենք նոր գիտելիք ձեռք բերեցին կայուն զարգացում թեմայի վերաբերյալ:

Խորհուրդներ դասընթացավարներին: Առաջնորդը պետք է ժամանակ և տարածք տրամադրի անհատական արտահայտվելու համար՝ հարգելով ամեն քայլի համար նախատեսված ժամանակը:

Վարժության առաջին քայլի ժամանակ առաջնորդը կարող է ստեղծել խաղաղ մթնոլորտ՝ խոսելով շշուկով, բայց պարզ:

Տարբերակներ:

Երազում ենք գույգերով

1. Բաժանե՛ք խումբը երիտասարդների գույգերի, ովքեր ունեն նմանատիպ երազանքներ ապագայի վերաբերյալ:
 2. Այս խմբերում խնդրե՛ք երիտասարդներին քննարկել իրենց երազանքները միասին:
 3. Խնդրե՛ք գույգերին ներկայացնելու կարճ պատմություն կամ բեմադրություն իրենց կյանքի մեկ օրվա մասին, երբ իրենց երազանքներն իրականություն են դարձել:
 - Ապագայի վերաբերյալ համընդհանուր երազանքի կառուցում
1. Երազանքներով կիսվում են ամբողջ խմբի հետ:
 2. Քննարկում համընդհանուր գաղափարների շուրջ:

3. Այնուհետև մասնակիցների հետ առաջնորդը գտնում է երեք համընդհանուր խնդիր, որոնք կարող են օգտագործվել հաջորդ սեմինարի ընթացքում:

Հետագա քայլերի առաջարկներ: Ամբողջացնել գործողության վերաբերյալ բոլոր գաղափարները և սկսել մտածել որևէ ծրագրի մասին այդ գաղափարներն իրականացնելու համար:

Ուղենիշ գաղափարներ: Երրորդ քայլի ընթացքում, երբ մասնակիցները ներկայացնում են իրենց երազանքը, դրանք կարող են կախվել պատիժ, այդկերպ, բոլորի համար տեսանելի կլինի:

Լանդ Արվեստ

Թեմաները: -Պատասխանատու սպառում

-Շրջակա միջավայր

-Բնություն

Բարդությունը: 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 10-20

Ժամանակը: 2ժ.

Համառոտ նկարագիրը: Լենդ արվեստը մեթոդիկա է, որն օգտագործում է բնության նյութերը (փայտանյութ, հող, քարեր, ավազ և այլն):

Սա մեթոդիկա է, որն օգտագործվում է խմբում: Խումբը աշխատում է բաց երկնքի տակ և բացահայտելով շրջակա ամբողջ միջավայրը՝ փորձում է ստեղծել արվեստի իրեր (առարկաներ, դիմանկարներ, զարդեր) բնության տարրերից:

Նպատակները:

- Խորացնել շրջակա միջավայրի թեման,
- Բացահայտել ստեղծագործական հմտությունները,
- Ստեղծել խմբային դինամիկա:

Նյութեր/ Նախապատրաստում:

- Նոթատետր
- Գրիչներ
- Դանակ
- Ֆոտոխցիկ

Ցուցումներ:

Վարժությունը տեղի է ունենում բաց երկնքի տակ (գետի մոտ, ափին, պուրակում...),

- Խմբի դասընթացավարը բաժանում է մասնակիցներին փոքր խմբերի և խնդրում է նրանց բացահայտել շրջակա միջավայրը,
- Դասընթացավարը տրամադրում է մասնակիցներին նոթատետր, որում գրի են առնվում հարցերը, որոնք

վերաբերվում են բնության տարրերին (“ինչ է ծաղկի անունը”...),

- Երբ ամեն մասնակից վերջացրել է հետազոտել նյութերը, նա կիավում է խմբի հետ, թե ինչ է գտել;
- Ամեն խումբ պետք է ընտրի, թե ինչ են իրենք ուզում պատրաստել և ներկայացնել իրենց նյութով և պետք է անվանի գեղարվեստական անունով;
- Արվեստի գործը պատրաստելուց հետո, տեղի կունենա կարճ ցուցահանդես. նոր արվեստաբանները կարող են բացատրել խմբին, թե ինչ է իրենից ներկայացնում իրենց ստեղծագործությունը;
- “Արվեստի յուրաքանչյուր գործ” պետք է լուսանկարվի և աշխատանքի մեկ այլ սեկցիայի ընթացքում բոլոր նկարները կկախվեն պաստառի վրա մասնակիցների տպավորությունների հետ մեկտեղ:

Վերլուծություն և գնահատում:

Դասընթացավարը հարցնում է մասնակիցներին, թե վարժության կատարման ընթացքում ինչպիսի զգացողություններ ունեին նրանք հետևյալի վերաբերյալ՝

- շփումը բնության հետ,
- սեփական ունեցածից ինչ-որ իրի ստեղծում,
- աշխատանքային խմբի մասին,
- արդյո՞ք ինչ-որ գրառում կատարել են իրենց նոթատետրում/ ի՞նչ գրառում;
- արդյո՞ք կան հարցեր այն ամենի մասին, ինչ իրենք տեսան բնության գրկում իրենց զբոսանքի ժամանակ:

Խորհուրդներ դասընթացավարներին: Դասընթացավարը պետք է թույլ տա մասնակիցներին ազատ արտահայտվել: Կարևոր է հարգել ժամանակը և սահմանափակ ժամանակ պետք է հատկացվի ազատ բացահայտումներին:

Որպեսզի ակտիվացվի մասնակիցների
ստեղծագործականությունը, դասընթացավարը պետք է
ընտրի տարատեսակ տարրերով հարուստ վայր:
Հետագա քայլերի առաջարկներ: Դուք կարող եք
կազմակերպել վարժության ընթացքում ստեղծված արվեստի
գործերի ցուցահանդես:

3) Mediterranean SOS

Դերախաղ

Թեմաները: Դերախաղ

Բարդությունը: 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 20-35

Ժամանակը: 3 ժամ

Համառոտ նկարագիրը: Յուրաքանչյուրը զգում է, որ այն, ինչին նա հավատում է, ամենաարդար և ճիշտ զգացողությունն է: “Դերախաղի” ընթացքում յուրաքանչյուրը կկարողանա փոխել տեսակետը և հասկանալ մյուսների մտքերը: Որքանով է դժվար որոշում կայացնել և տեղեկացված կարծիք ունենալու համար որքան լավ տեղեկացված մենք պետք է լինենք ցանկացած խնդրի շուրջ:

Նպատակները:

- Տեղեկություններ տալ մասնակիցներին քննարկվող հարցի շուրջ,
- Կիրառել փաստարկումներ,
- Հասկանալ որոշումների կայացման գործընթացը և դժվարությունները,
- Բացահայտել իրենց հիմնական դերը՝ որպես ակտիվ քաղաքացիներ,
- Սովորել աշխատել խմբերում:

Նյութերը:

- Բոլոր մասնակիցների համար պատճենահանված սցենարը,
- Հոդվածներ և տեղեկատվական նյութ վարժության թեմայի շուրջ, որոնք որ կարտահայտեն բոլոր կարծիքները,
- 1 ստվարաթուղթ,

- Նշումներ կատարելու համար սպիտակ թուղթ,
- Գրիչներ,
- 1 նշագրիչ:

Ցուցումներ:

1. Դերախաղ.

- Խմբի հետ կարճ քննարկում վարժության թեմայի շուրջ,
- Ներգրավված հաստատությունների/խմբերի հանդիպումը:

2. Սցենարի ստեղծումը.

- Ուսանելի սցենարը բաժանվում է խմբերին,
- Ներգրավված հաստատությունները/խմբերը ներկայացվում են՝ ըստ նախնական առաջարկների (որպես հաստատություններ, բնակիչներ, ՀԿ-ներ, Նախարարություն և այլն):

- Դերախաղի շրջանակի ընտրություն (օրինակ՝ հեռուստահաղորդում) և քննարկման կանոնների սահմանում, խոսնակների հերթականությունը և փաստարկումների և առարկությունների ներկայացման ստեղծությունը:

3. Խմբերի կազմում և դերերի ձևավորում.

- Խմբերի ստեղծում և քննարկման համակարգողի սահմանում,
- Խմբերը ձևակերպում են իրենց փաստարկները՝ փորձելով միևնույն ժամանակ մտածել և հակափաստարկներ բերել մյուս խմբերին,

Վերլուծություն և գնահատում: Քննարկվելիք թեմաների շուրջ մտորումն ավելի դյուրին դարձնելու համար խորհորդ է տրվում նստել շրջանաձև. Այդկերպ բոլոր մասնակիցները հնարավորություն կունենան նայել միմյանց և «հավասարը հավասարի հետ» պայմաններում կարծիքներ փոխանակել: Հարցրե՛ք մասնակիցներին, թե ինչ զգացողություններ ունեին վարժության կատարման ընթացքում, թու՛յլ տվեք, որպեսզի յուրաքանչյուրն ազատ զգա իրեն ասելու, թե ինչ է մտածում:

Մկսե՛ք քննարկումը դերախաղի իմաստի մասին խոսելով՝ ի՞նչ եք զգում մեկ այլ դեր խաղալով: Դա առաջացնու՞մ է արդյոք նոր մտքեր: Օգնու՞մ է դա արդյոք հաշվի առնել այլ տեսակետներ:

Մասնակիցները պետք է արտահայտեն իրենց կարծիքները, գնահատեն քննարկվող խնդրի շուրջ իրենց փորձառությունը և հասկանան տվյալ խնդրի համար պատասխանատու անհատի կարևոր դերը:

Խորհուրդներ դասընթացավարներին:

- Նման վարժությունների սկզբում դասընթացավարը պետք է որոշ ժամանակ տրամադրի, որպեսզի խմբի անդամները կարողանան ակտիվ մասնակցություն ցուցաբերեն:

- Ունենալ բոլոր կարծիքները ներկայացնող բավարար տեղեկատվական նյութ:

- Դասընթացավարը չպետք է արտահայտի իր տեսակետը և միջամտի վարժության ընթացքում, նա պետք է ամփոփի ներկայացված կարծիքները և մտորի այն խնդիրների շուրջ, որոնք չեն նշվել:

Տարբերակներ: Համաձայն ձեր ընտրած թեմատիկային՝ դերերը և հաստատությունները կարող են փոխվել:

Ուղենիշ գաղափարներ: Յուրաքանչյուր թիմը կպատրաստի տվյալ խնդրի վերաբերյալ փաստաթուղթ/թղթապանակ, որում կներառվի վերոնշյալ վարժության նկարագիրը, այն տեղեկատվությունը, որը խումբը հավաքել է խնդրի ուսումնասիրության համար, որը կպահվի նրանց գրադարանում:

Նրանք կարող են նաև բոլոր պատկան ատյաններին նամակ ուղարկել, որում կներկայացվեն տվյալ խնդրի շուրջ իրենց ունեցած տեսակետները և առաջարկները:

Բանավեճ

Թեմաները: Ակտիվ քաղաքացիների դերը

Բարդությունը: 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 20-35

Ժամանակը: 3 ժամ

Համառոտ նկարագրիր: Խումբն աշխատում է մի շատ կարևոր խնդրի շուրջ, որն իր մեջ ամփոփում է սոցիալական, տնտեսական և շրջական միջավայրի գործոններ՝ փորձելով գտնել լուծումներ, միաժամանակ հարգելով մարդու իրավունքները և իրավունքները շրջակա միջավայրի նկատմամբ:

Նպատակները:

- Հասկանալ որոշումների կայացման գործընթացը և դժվարությունները,
- Բացահայտել ակտիվ քաղաքացի լինելու կարևոր դերը,
- Սովորել աշխատել խմբերում:

Նյութեր/ Նախապատրաստում:

- Սցենարի պատճեններ,
- Վարժության թեմայի վերաբերյալ հոդվածներ և տեղեկատվական նյութ (3-4 պատճեն),
- 1 ստվարաթուղթ, նշումներ անելու համար սպիտակ թուղթ, գրիչ և 1 նշագրիչ:

Ցուցումներ: Բանավեճն օգտագործվում է հակասական թեմաների վերլուծության ժամանակ.

- Մասնակիցների երկու խումբ պետք է լսարանի հետ խոսեն միևնույն թեմայի շուրջ: Առաջին խումբը պետք է խոսի թեմայի օգտին, իսկ մյուս խումբը՝ թեմային դեմ: Երկու թիմերն էլ իրենց տրամադրության տակ ունեն միևնույն ժամանակահատվածը իրենց կարծիքները ներկայացնելու համար, իսկ վերջում ներկայացված կետերից ամենակարևորները պետք է ամփոփվեն: Սա հակասական

կարծիքները ներկայացնելու և տարբեր համոզմունքների ու արժեքային համակարգերը գնահատելու շատ արդյունավետ եղանակ է:

• Համակարգողը նշանակվում է, և քննարկումը սկսվում է:

Վերլուծություն և գնահատում: Բոլոր մասնակիցները

նստում են շրջանաձև, այդպես «հավասարը հավասարի հետ» խոսակցություն կարող է սկսվել:

Հարցրե՛ք յուրաքանչյուր մասնակցին, թե ինչ

զգացողություններ ունեք վարժության ժամանակ և ինչպես է նա իրեն զգում հիմա և այդ զգացմունքների մասին քննարկում սկսե՛ք՝ փորձելով ներգրավել բոլորին:

Սկսե՛ք նախնական կարծիքներից՝ համեմատություն անելով նրանց վերջնական դիրքորոշումների հետ:

Հրավիրե՛ք անդրադառնալ այն հարցին, թե ինչպես

հակասական կարծիքները կարող են ազդել մեր արժեքային համակարգի վրա կամ խախտել այն:

Խորհուրդներ դասընթացավարներին: Խմբի մասնակիցներին

պետք է խրախուսել, որ նրանք ազատ արտահայատեն իրենց տեսակետներն ու հարցերը: Բացի հարուստ նախնական

նյութից՝ դասընթացավարը պետք է խնդիրն այնչափ

ուսումնասիրած լինի, որ ունակ լինի լուծել խմբի

անդամների հարցերը: Դասընթացավարը չպետք է իր

սեփական կարծիքի վրա հիմնվի և միջամտի վարժության

ընթացքում: Դասընթացավարը ժամանակ կունենա

բանավեճ անցկացնել և ամփոփել արտահայտած

տեսակետներն ու ընդգծել այն խնդիրները, որոնք

քննարկման ընթացքում չեն նշվել:

Շրջակա միջավայրի պահպանում – Մարդու իրավունքներ. Ընկերներ, թե՛ թշնամիներ

Թեմաները: Մարդու իրավունքներ և շրջակա միջավայր

Բարդությունը: 1-ին աստիճան

Խմբի անդամների թիվը: 20-35

Համառոտ նկարագիրը: Մենք բոլորս հավասար ենք: Սակայն ի՞նչ է դա նշանակում, երբ ի հայտ է գալիս այն պահը, երբ մենք մարդու իրավունքներ ենք պահանջում: Արդյոք երկրագնդի վրա ապրող մյուս էակները իրավունքներ ունեն՞: Եվ ո՞ր իրավունքն է ավելի կարևոր:

Նպատակները:

- Բացահայտել մարդու բազմաթիվ իրավունքները,
- Գնահատել դրանցից յուրաքանչյուրի արժեքը,
- Անդրադառնալ հետևյալ հարցին՝ Ո՞վ ունի իրավունքներ,
- Հասկանալ Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի միջև կապը և յուրաքանչյուր անհատի դերը՝ որպես ակտիվ քաղաքացի:

Նյութեր/ Նախապատրաստում:

- Խմբի անդամների թվաքանակով Մարդու իրավունքների հռչակագրի պատճեններ,
- Մարդու իրավունքների վերաբերյալ այլ վաժություններից մասնակիցների առաջարկներով և խոսքերով քարտեր,
- Սովարաթղթեր կամ գրատախտակ,
- Նշագրիչներ:

Ցուցումներ: Կիրառե՛ք բանավեճի մեթոդը՝

- Դասընթացավարների կողմից նախնական ներկայացում, հետո դասընթացավարների ամբողջ խումբը ներկայացնում է իրենց տեսակետները և մտորումները այն ամենի մասին, ինչ ներկայացվում է, ինչպես նաև թեմայի շուրջ ընդհանրապես:

- Խնդրե՛ք մասնակիցներին մտային գրոհի միջոցով թվարկել մարդու իրավունքներից մի քանիսը, որոնք կարող են այնուհետև գրվել ստվաթղթերի կամ գրատախտակի վրա:
 - Հետո բաժանե՛ք Մարդու իրավունքների հռչակագիրը և խոսե՛ք այն մասին, թե որքանով է քաղաքացին իմանում իր իրավունքները, հռչակագրի որ իրավունքներն են գործածվում ազգային և միջազգային մակարդակով, և վերջապես ինչ աստիճան է յուրաքանչյուր անձը պահանջում իր իրավունքները:
 - Օգտագործե՛ք նախորդ վարժություններում խմբի անդամների կողմից կիրառված արտահայտությունները և կարծիքները և խնդրե՛ք նրանց, որ որոշեն, թե արդյոք վերջիններս կապված են Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի հետ, թե ոչ:
- Վերլուծություն և գնահատում: Խնդրե՛ք մասնակիցներին նստել շրջանաձև:
- Քննարկումը սկսե՛ք զգացմունքային տեսանկյունից՝ Ինչպիսի՞ զգացողություններ ունեիք: Ինչպե՞ս եք ձեզ զգում հիմա:
- Ուսումնասիրե՛ք սովորելու մակադակը՝ Ի՞նչ եք կարծում ինչ եք սովորել: Ինչպե՞ս եք կարող կիրառել այս նոր գիտելիքները:
- Մտորե՛ք այն հարցի շուրջ, թե, որպես մարդ արարած, որքան կարևոր է իմանալ մեր իրավունքները՝ ակտիվ քաղաքացիներ լինելու և շրջակա միջավայրը
- Խորհուրդներ դասընթացավարներին: Դասընթացավարը պետք է խորությամբ ուսումնասիրի Մարդու իրավունքների հռչակագիրը և պետք է ներկայացնի մարդու իրավունքների կապը շրջակա միջավայրի հետ խնդրի վերաբերյալ գիտական տեղեկատվություն:

Ուղենիշ գաղափարներ: Թիմը կարող է ստեղծել
իրավունքների նոր հրովարտակ, որը կապում է մարդու
իրավունքները շրջակա միջավայրի հետ:

Կանաչ մասնագիտություններ՝ երկրնտրական (ալտերնատիվ) հեռանկար

Թեմաները: Կանաչ մասնագիտությունները: Աշխատանք փնտրել և գտնելը:

Բարդությունը: 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 20-35

Ժամանակը: 2-3 ժամ

Համառոտ նկարագիրը: Երբ մենք մեր մասնագիտությանը նայում ենք շրջակա միջավայրի տեսանկյունից, որպես արդյունք ունենում ենք հարգանք դեպի շրջակա միջավայրը և այլ գործնական արդյունքներ շատ այլ մակարդակներում (սոցիալական, տնտեսական, բնակելի և այլն):

Նպատակները:

- Բացահայտել մասնագիտական վերականգման նոր ուղիներ,
- Սովորել և հասկանալ Կանաչ մասնագիտությունները,
- Կանաչ մասնագիտությունն իրականացնելու համար տեղեկացնել անհրաժեշտ դասընթացի կամ կրթության վերաբերյալ,
- Գտնել նոր հետաքրքրություն,
- Ձեռք բերել կյանքին շրջակա միջավայրի մոտեցում, որն ազդում է աշխատանքային կյանքի վրա:

Նյութեր/ Նախապատրաստում:

- Մի քանի մասնագիտություններով քարտեր
- 1 սովորաթուղթ, նշումներ կատարելու համար թուղթ
- Գրիչներ
- 1 նշագրիչ

Ցուցումներ: Մտային գրոհ՝

- Խումբը թվարկում է բոլոր այն մասնագիտությունները, որոնք կանաչ է համարում,

- Փորձե՛ք նախնական գիտելիքների հիման վրա տալ դրանց սահմանումը,
- Վերցրե՛ք լուրջ մասնագիտություններով քարտեր և խնդրե՛ք խմբին դրանք բաժանել կանաչների և ոչ կանաչների:
Վերլուծություն և գնահատում: Շրջանաձև նստած՝ մասնակիցները սկսում են պատասխանել այն հարցին, թե ինչ զգացողություններ ունենին:
 Նրանք շարունակում են խոսել այն մասին, թե ինչ սովորեցին և բացահայտեցին կանաչ մասնագիտությունների մասին:
 Անդրադարձեք այն հարցին, թե ինչն է մասնագիտությունը դարձնում կանաչ մասնագիտություն:
Խորհուրդներ դասընթացավարներին: Յուրաքանչյուր մասնակից կարող է ընտրել իր նախընտրած աշխատանքը, իսկ հետո նա պետք է մտածի կանաչ դարձնել այդ աշխատանքը:

4) Իտալիա. Centro per lo Sviluppo Creativo “Danilo Dolci”

Հետևյալ չորս վարժությունները մեկ սեմինարի մաս են կազմում, որի նպատակն է «անձնական դիրքորոշումներն» արտահայտելու պայմաններ ստեղծել և մասնակիցների հետ գիտելիքի և առճակատման հնարավորություն տալ: Դա կարելի է իրականացնել սեփական անձի և հասարակության բարեկեցության արժևորմամբ՝ ավելացնելով ինքնավստահությունը, հարաբերությունների մեջ մտնելու հմտությունները, հաղորդակցման հմտությունները, «մյուսի» հետ հարաբերություն հաստատելու կարողությունը, ինչպես նաև կարծրատիպերը և կանխակալ կարծիքները կոտրելու համար օգտակար գործիքներ:

Անձնական իրերի հետ կապված պատմություն

Թեմաները: Միմյանց ճանաչել, կարծրատիպեր և կանխակալ կարծիքներ

Բարդությունը: 1-ին աստիճան

Խմբի անդամների թիվը: 10

Ժամանակը: 1ժ.30

Համառոտ նկարագրիր: Այս վարժությունը խմբի հետ մեր ինդրի վերաբերյալ մտորումներ սկսելու առաջին քայլն է: Իրենց անձնական իրերի միջոցով մասնակիցները միմյանց ավելի լավ կճանաչեն և ավելի շատ բան կբացահայտեն իրենց անհատականության մասին: Այս վարժության միջոցով կարելի է նաև ներկայացնել կարծրատիպերի և

կանխակալ կարծիքների վերաբերյալ մտորումները, ինչը սեմինարի ընթացքում կարևոր թեմա կլինի:

Նպատակները:

- Ավելի շատ բան իմանալ մյուսների մասին՝ փորձելով լինել հենց նրանց փոխարեն,
- Մի կողմ թողնել կարծրատիպերը և կանխակալ կարծիքները:

Նյութեր/ Նախապատրաստում:

- Յուրաքանչյուր մասնակից պետք է հինգ անձնական իր բերի, որոնք որոշ տեղեկություն կտան իր անձի մասին,
- Անհրաժեշտության դեպքում թուղթ և գրիչ:

Ցուցումներ:

- Դասընթացավարն աթոռները դասավորում է շրջանաձև:
- Մասնակիցներն իրենց իրերը թողնում են իրենց աթոռի վրա, հետո նրանք շարժվում են և պատահաբար ընտրում են անձանոթ իրերով մեկ այլ աթոռ՝ իրերը գաղտնի են պահվում հենց սկզբից:
- Հինգ րոպե յուրաքանչյուրն ուսումնասիրում է իր գտած նոր իրերը և սկսում է մտածել այն անհատականության մասին, որին բացահայտում է:
- Խաղի վերջում նրանք փորձում են այդ իրերն օգտագործելով նոր անհատականություն ձևավորել:
Վարժությունն ավելի դյուրին դարձնելու համար նրանք կարող են գրել:

Վերլուծություն և գնահատում: Շրջանաձև նստած մասնակիցները բացահայտում են իրենց սեփական իրերը և համեմատում իրենց իրական անհատականությունը նորի հետ: Յուրաքանչյուրը հնարավորություն կունենա խոսել իր զգացողությունների մասին, արդյոք նա կարողացավ նկարագրությամբ իրեն ճանաչել, եթե ոչ՝ բացատրել ինչու: Նրանք կանդրադառնան կարծրատիպերին. որքանով է դյուրին, երբ իրենց դատում են միայն արտաքին տեսքով:

Խորհուրդներ դասընթացավարներին: Կախված թիրախային խմբից՝ դասընթացավարը պետք է օգնի մասնակիցներին արտահայտել իրենց զգացմունքները՝ ստեղծելով հանգստացնող և հարմարավետ միջավայր, յուրաքանչյուրի մոտ առաջացնելով այն զգացողությունը, որ իրեն լսում են և ընդունում, ուղղելով ճիշտ հարցեր առանց ձանձրալի կամ կպչուն լինելու:

Առաջին հարցերը պետք է լինեն՝ Ի՞նչ զգացողություններ ունեիք, Ի՞նչպե՞ս եք, Այնուհետև դասընթացավարը կարող է պահպանել զգացմունքային հոսքը՝ խոսքի ընթացքում մասնակցին խրախուսելով:

Տարբերակներ: Իրերի “պատահական” ընտրությունն ավելի դյուրին դարձնելու համար, այն դեպքում, եթե խմբում որոշ մարդիկ իրար ճանաչում են, կարող եք իրերը թաքցնել պայուսակներում և յուրաքանչյուրին մեկական աթոռ հատկացնել: Ընտրությունն այլևս “պատահական” չի լինի, սակայն այս դեպքում դուք համոզված կլինեք, որ յուրաքանչյուրը կգտնի իրեր, որոնք պատկանում են մեկին, ում նրանք չեն ճանաչում:

Ուղենիշ գաղափարներ: Կարևոր է, որ բոլոր մասնակիցներն ունենան միմյանց աչքերի մեջ նայելու հնարավորություն: Այս դեպքում շրջանաձև նստելը լավագույն տարբերակն է: Քննարկման ժամանակ ամեն անգամ այն մասնակիցները, ովքեր ներկայանում են, շրջանի կենտրոն են գալիս:

“Մեկ քայլ առաջ”

Թեմաները:

- Ինքնություն/Բազմազանություն
- Խտրականություն և կանխակալ կարծիք

Բարդությունը: 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 10

Ժամանակը: 1ժ.30

Համառոտ նկարագրիր: Այս վարժությունը մասնակիցներին հասարակության մեջ իրենց ուրիշների դերում զգալու հնարավորություն է տալիս: Քննարկվող խնդիրներից են՝

- Հաճախ խտրականության և օտարման պատճառ հանդիսացող սոցիալական անհավասարությունը,
- Կարեկցանքն ու դրա սահմանները:

Նպատակները:

- Խրախուսել կարեկցանքն այլոց նկատմամբ, ովքեր տարբեր են,
- Իրազեկել մասնակիցներին հասարակության մեջ առկա անհավասար հնարավորությունների մասին,
- Ուսումնասիրել սեփական անհատականությունը և կանխակալ կարծիքը բազմազանություն կոնցեպտի բացահայտման միջոցով:

Նյութեր/ Նախապատրաստում:

- Ազատ տարածություն (միջանցք, ընդարձակ սենյակ կամ բակ)
- Դերաքարտեր

Ցուցումներ:

1. Պատրաստե՛ք յուրաքանչյուր մասնակցի համար մեկական դերաքարտ: Օրինակ՝
 - Դուք տեղական բանկի մենեջերի դուստրն եք:
 - Դուք Մալիից անօրինական ներգաղթյալ եք:

- Դուք հաշմանդամ երիտասարդ եք, ով կարող է տեղաշարժվել միայն անվասայլակով:
 - Դուք 22 տարեկան ծեր լեսբուհի եք:
2. Պատահականորեն ընտրված մեկական քարտ բաժանե՛ք մասնակիցներին: Ասացե՛ք նրանց, որ դրանք պահեն իրենց մոտ և ոչ ոքի ցույց չտան:
3. Այժմ խնդրե՛ք նրանց, որ սկսեն դերի մեջ մտնել: Նրանց օգնելու համար ընթերցե՛ք ներքոնշյալ հարցերից մի քանիսը՝ յուրաքանչյուրից հետո ընդմիջելով, որպեսզի մասնակիցները խորհեն և ընդհանուր պատկերացում կազմեն իրենց անձի և կյանքի վերաբերյալ:
- Ինչպիսիք մանկություն եք ունեցել:
 - Ի՞նչ խաղեր եք խաղացել:
 - Ի՞նչ աշխատանք են կատարել ձեր ծնողները:
 - Ինչպիսիքն է ձեր առօրյան այժմ:
 - Որտե՞ղ եք դուք շփվում մարդկանց հետ:
 - Ինչպիսիքն է ձեր կենսակերպը:
 - Ի՞նչն է անհանգստացնում և վախեցնում ձեզ:
4. Այժմ խնդրե՛ք մասնակիցներին լուռ կանգնել կողք կողքի (մեկնարկային շարք կազմել): Հայտնե՛ք նրանց, որ դուք պատրաստվում եք իրավիճակների մի ցանկ ընթերցել: Յուրաքանչյուր “այո” պատասխանի դեպքում նրանք պետք է մեկ քայլ առաջ գան: Հակառակ դեպքում, նրանք պետք է կանգնած մնան իրենց տեղերում և չշարժվեն:
5. Մեկ-մեկ ընթերցե՛ք իրավիճակները: Վերանայեք ցուցակը և այն համապատասխանեցրեք այն խմբին, որի հետ աշխատում եք: Օրինակ՝
- Դուք երբեք չեք հանդիպել լուրջ ֆինանսական դժվարությունների,
 - Դուք զգում եք, որ սոցիալական և քաղաքական խնդիրների վերաբերյալ ձեր տեսակետը հաշվի է առնվում,

- Դուք ունեք ձեր կարիքների սոցիալական և բժշկական համապատասխան պաշտպանություն,
- Դուք զգում եք, որ կարող եք սովորել և հետևել ձեր ընտրած մասնագիտությանը,
- Դուք կարող եք սիրահարվել ձեր ընտրած մարդուն,
- Դուք երբեք ձեր ծագման պատճառով խտրականություն չեք զգացել:

6. Խաղի վերջում բոլորին խնդրեք, որպեսզի ամրագրեն իրենց դիրքը: Այնուհետև նրանց մի քանի բոպե դերից դուրս գալու համար հնարավորություն տվեք՝ նախքան քննարկումը լիակազմ նիստում:

Վերլուծություն և գնահատում: Նախ հարցրեք

մասնակիցներին, թե ինչ տեղի ունեցավ և պարզեք մասնակիցների վերաբերմունքը խաղին, իսկ հետո սկսեք խոսել բարձրացված խնդիրների շուրջ և այն մասին, թե իրենք ինչ սովորեցին խաղի ընթացքում:

- Ինչպիսիք զգացողություններ ունեին մասնակիցները իրենց տեղերում կանգնած կամ քայլ կատարելիս:
- Հաճախ առաջ գնացող մասնակիցները ոչքր պահին տեսան, որ մյուսները

նկատելիորեն հետ են մնում իրենցից:

- Որևէ մեկը զգաքց, որ եղան պահեր, երբ իր հիմնական մարդկային իրավունքներն անտեսվում են:
- Կարո՞ւք են մասնակիցները կռահել միմյանց դերերը: (Մասնակիցներին թույլ տվեք բացահայտել իրենց դերերը քննարկման այս փուլում):

- Դյուրի՞նք, թե՞ դժվար էր տարբեր դերեր կատարելը:

Մասնակիցներն ինչպե՞ս են պատկերացնում այն մարդուն, ում դերը ստանձնել են:

- Այս վարժությունը որևէ կերպ արտացոլու՞մ է հասարակության վիճակը: Ինչպե՞ս:

Խորհուրդներ դասընթացավարներին:

- Այս վարժությունը կարևորվում է նրանով, որ ակնհայտ է դարձնում հեռավորությունը մասնակիցների միջև, հատկապես խաղի վերջում, երբ առաջ գնացողների և տեղում կանգնածների միջև տարածությունն աստիճանաբար մեծանում է: Խաղի ազդեցությունը մեծացնելու համար անհրաժեշտ է դերերը հարմարեցնել մասնակիցների իրական կյանքին:

- Այս վարժության և մասնավորապես հնարավոր իրավիճակների և հարցերի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ http://eycb.coe.int/compass/en/chapter_2/2_38.asp

Տարբերակներ: Քանի որ այն թիրախային խումբը, որի հետ մենք աշխատել ենք, ներառում էր անբարենպաստ պայմաններում ապրող երիտասարդների, մենք այն կերպարները, որոնք նրանք պետք է մարմնավորեին, համապատասխանեցրել ենք այդ կերպարների կյանքով ապրելու հնարավորություններին՝ փորձելով թեթև ազդեցություն ունենալ նրանց կարծրատիպերի վրա: Մենք կարծում ենք, որ ավելի լավ է հարգել մշակութային սահմանները՝ հաշվի առնելով վարժությանը տրամադրվող սահմանափակ ժամանակահատվածը:

Օրինակ՝ մաֆիայի կողմից սպանված ոստիկանի որդի, խիստ կաթոլիկ ընտանիքի համասեռամուլ երիտասարդ:

Հետագա քայլերի առաջարկներ: Ձեր աշխատանքի սոցիալական միջավայրին համապատասխան՝ դուք կարող եք խմբի հետ հանդիպման հրավիրել մշակութային կամ սոցիալական փոքրամասնություններին աջակցող կազմակերպությունների ներկայացուցիչների:

Ուղենիշ գաղափարներ: Ձայնարկիչ, հանգստացնող երաժշտություն:

“Կամուրջը”

Թեմաները:

- Համագործակցություն/Մրցակցություն
- Հաղորդակցություն

Բարդությունը: 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը: 10

Ժամանակը: 1 ժամ

Համառոտ նկարագրիր: Այս վարժությունը հիմնված է խմբի ներսում համագործակցության և մրցակցության վրա: Երկու խմբերը պետք է սահմանափակ ժամանակահատվածում կամուրջ պատրաստեն:

Նպատակները:

- Թիմային աշխատանքի միջոցով ազդել խմբի՝ համագործակցության և մրցակցության վերաբերյալ ունեցած դիմամիկայի վրա:

- Ձարգացնել համագործակցության ընթացքում լսելու հմտությունները:

- Ձարգացնել ոչ խոսքային հաղորդակցությունը:

Նյութեր/ Նախապատրաստում: Պարագաներ՝ մկրատ, թուղթ, մատիտ, պլաստիկ բաժակ, ստվարաթուղթ, սոսինձ և այլն:

Պարագաները կարող են պատահականորեն ընտրվել, քանի որ նպատակը կատարյալ կամուրջ սարքելը չէ, այլ սարքելու ընթացքն է:

Ազատ տարածություն (միջանցք, ընդարձակ սենյակ) երկու թիմերին բաժանելու համար:

Ցուցումներ: Խաղի տևողությունը մոտ 15-20 րոպե է:

- Երկու թիմերին տրվում է սահմանափակ ժամանակում կամուրջ սարքելու առաջադրանք: Կա մեկ պայման՝ կամուրջի վրա պետք է տեղադրվի ջրով լի պլաստիկ բաժակ:
- Յուրաքանչյուր թիմ պետք է սարքի կամուրջի մի մասը, որը պարտադիր պետք է լրացնի մյուս թիմի պատրաստած

հատվածին: Դրա համար յուրաքանչյուր թիմն ունի այս առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գործիքներ և նյութեր:

- Խաղի սկզբում երկու թիմերն էլ պետք է ընտրեն «առաջնորդի», ով ներկայացնելու է իրենց թիմը:
- Կամուրջը սարքելու ընթացքում երկու առաջնորդների միջև մի քանի հանդիպումներ են կազմակերպվում (մեկ հանդիպում յուրաքանչյուր 5 րոպեն մեկ): Երկու թիմերը կարող են միմյանց հետ հաղորդակցվել և խոսել իրենց առաջադրանքի մասին միայն այդ հանդիպման ժամանակ: Վերլուծություն և գնահատում: Երբ ժամանակն ավարտվում է, երկու թիմերն իրենց պատրաստածները բերում են սենյակի կենտրոն և փորձում միացնել կամուրջի երկու մասերը:

Խաղի կազմակերպիչը փորձարկում է կամուրջը՝ դրա վրա դնելով ջրով լի պլաստիկ բաժակ:

Շրջանաձև նստած՝ մասնակիցները մեկ առ մեկ բացատրում են, թե ինչ զգացողություններ ունեին խաղի ժամանակ:

Դուք կարող եք հարցնել՝

- Ինչպե՞ս եք կարող սահմանել թիմում ձեր դիրքորոշումը:

Ի՞նչ կարող եք ասել թիմում այլ մասնակիցների դիրքորոշման մասին:

- Ի՞նչ եք մտածում յուրաքանչյուր խմբի անդամների միջև տեղի ունեցած հաղորդակցման մասին:

- Ձեզ հաջողվե՞ց համագործակցության համար հաղորդակցվել:

- Ինչպե՞ս կարող էիք բարելավել, ավելի արդյունավետ դարձնել թիմային աշխատանքը:

- Ինչպե՞ս էիք վերաբերվում առաջնորդի վարքին:

- Կարծու՞ם եք արդյոք, որ նմանատիպ փորձը կարող է առօրյա կյանքում օգտակար լինել ձեզ համար:

Խորհուրդներ դասընթացավարներին:

1. Շատ կարևոր է հետևել խաղի ժամանակին: Տևողությունը սահմանափակ է և այն հետևանքներ կարող է թողնել թիմի ներսում համագործակցության/մրցակցության դինամիկայի վրա:

2. Խաղի ընթացքում տեղի ունեցածն ավելի լավ գնահատելու համար դուք առնվազն երկու հոգու կարիք կունենաք, ովքեր կհետևեն յուրաքանչյուր խմբին և կստուգեն ժամանակը:

3. Դուք խաղի ընթացքում չեք կարող օգնել թիմերին.

մասնակիցները պետք է հասկանան և հենց իրենք կազմակերպեն իրենց աշխատանքը: Իրենց կազմակերպման ձևը և դժվարությունները, որոնց կարող են հանդիպել, գնահատման մի մասն են կազմում:

Տարբերակներ: Մենք որոշեցինք ներկայացնել “Կամուրջը” խաղի երկու տարբերակ՝

1. Դիտորդը՝ նա է, ում առաջադրանքն է երկու թիմերին հետևել և գննել մասնակիցների վարքը:

2. Յուրաքանչյուր խմբի համար մի մասնակից (խանգարողը) կամուրջը կառուցելու ընթացքը խոչընդոտելու առաջադրանք ունի: Մյուսի (դասընթացավարը) առաջադրանքն է հեշտացնել թիմի ներսում կապերի հաստատումը:

3. Թիմային աշխատանքի ընթացքում խոսքային հաղորդակցության ցանկացած ձև արգելված է: Միայն առաջնորդները կարող են խոսել հանդիպումների ընթացքում:

Ուղենիշ գաղափարներ: Քննարկմանը երկար ժամանակ տրամադրեք. մասնակիցները հաճախ իրենց ձախողակ են զգում, եթե չեն կարողացել սարքել կամուրջը, նրանք ընկճվում են կարճ ժամանակի պատճառով:

Բարոյականության դիագրամ Վերջնական գնահատում

Թեմաները: Խաղ և մտորում

Բարդությունը: 1-ին աստիճան

Խմբի անդամների թիվը: 10

Ժամանակը: 1 ժամ

Համառոտ նկարագրիր: Մա գնահատման մոդել է, որն օգտագործվում է դիտարկելու և գնահատելու յուրաքանչյուր վարժություն կամ սեմինար՝ որպես աշխատանքի վերջնական գնահատում:

Նպատակները:

- Փոխանակել տպավորություններ այն մասին, թե ինչ զգացողություններ է ունեցել խումբը նախորդ վարժությունների ընթացքում կարծրատիպերի և կանխակալ կարծիքների, հասարակության մեջ հնարավորությունների անհավասարության տեղեկացվածության, սոցիալական փոքրամասնությունների, բազմազանության կոնցեպտի մասին:

- Գնահատել մասնակիցների կողմից այն հմտությունների ձեռքբերումը, ինչպիսիք են կարեկցանքը, լսելու հմտությունները, համագործակցությունը, ոչ խոսքային հաղորդակցությունը:

Նյութեր/ Նախապատրաստում: Դասընթացավարը պետք է ունենա թուղթ, որի վրա նշված կլինեն մասնակիցներին տրվելիք հարցերը:

Ցուցումներ: Բարոյականության դիագրամ:

- Խումբը շրջան է կազմում:

- Մասնակիցները մեկը մյուսի հետևից կանգնում են շրջանի կենտրոնում և ներկայացնում վերջին վարժության վերաբերյալ իրենց տեսակետը և գնահատումը: Մյուս մասնակիցները նույնպես արձագանքում են. եթե նրանք

համաձայն են, մի քայլ առաջ են կատարում, եթե ոչ, ապա մի քայլ հետ են կատարում, եթե նրանք որևէ կոնկրետ արձագանք չունեն, նրանք միայն ետ են շրջվում առանց շարժվելու:

- Այնուհետև բոլորը վերադառնում են մեկնարկային դիրքին՝ շրջանին, մեկ այլ մասնակից կարող է այժմ գնալ կենտրոն և արտահայտել իր կարծիքը:

Ներառեք նաև օգտակար հարցեր, ինչպեսիք են՝

1. Ձեզ դուր եկա՞վ (կամ բավականություն ստացա՞ք վերջին վարժությունից):

2. Ի՞նչ սովորեցիք:

3. Կարծու՞մ եք արդյոք, որ այս վարժություններն օգտակար եղան և ինչու՞:

4. Դուք զգու՞մ եք արդյոք, որ թեմաների վերաբերյալ ավելի գիտակից եք դարձել:

5. Դուք կարողացա՞ք արդյոք արտահայտել ձեր անհատականությունը:

6. Դժվա՞ք էր ձեզ համար:

7. Ու՞ր վարժությունները ամենաշատը և/կամ ամենաքիչը հավանեցիք:

8. Մասնակիցներից ու՞մ հետ, որին դուք նախկինում չեք ճանաչել, կցանկանայիք ճամփորդել:

9. Ի՞նչ եք կարծում ձեր ընտանիքին և ընկերներին կպատմեք այս վարժությունների մասին:

Վերլուծություն և գնահատում: Հարցերը ձևակերպելիս կարող եք հետևել դիտարկումների տվյալներից ստացված արդյունքներից և/կամ սոցիալական և զգացմունքային վարքի սեփական դիտարկումից:

Օրինակ՝

1. Միջանձնային դաշտ (մյուսների շրջապատում լավ զգալը),

2. Հուսալիությունը և պարտականությունները՝ կառուցել հարաբերությունները՝ կարեկցանքի միջոցով ճանաչելով մյուսների կարիքները, սովորեցնելով,
3. Հարմարվողականությունը և մասնակացությունը՝ աշխատանքային առաջարկներին խանդավառ մասնակցությունը, վարքի փոփոխումը իրավիճակներին համաձայն, դեր խաղալը խմբի կառուցողական վարժություններում,
4. Համագործակցություն (Հարգանքը մյուսների նկատմամբ)՝ համաձայնվելը աշխատել բոլորի հետ և յուրաքանչյուրի սահմանափակումները և հնարավորությունները հարգելը,
5. Զսպվածություն (սեփական անձի)՝ պրոբլեմատիկ իրավիճակների ստեղծագործ լուծումներ գտնելը:
Խորհուրդներ դասընթացավարներին: Մասնակիցներին տրվելիք հարցերը պետք է վերաբերեն վերջին վարժությանը և դրանց անդրադառնալու հնարավորություն ստեղծելու համար դուրս բերվեն խմբի կարիքների և բնորոշ հատկանիշների դիտարկումից;
Ուղենիշ գաղափարներ: Կարևոր է այս խաղն անցկացնել ընդարձակ տարածքում, այդպեսով մասնակիցների շարժումները պարզ կլինեն բոլորի համար:

V. եզրահանգումներ

Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությունը կարող է սովորողից դուրս բերել գիտելիքը, որը նա հաճախ ունի, սակայն պակաս զարգացած է, կամ ակտիվացնել նոր գիտելիքի գործընթացը: Այսպիսով, ինչպես մենք տեսանք, դա տեղի է ունենում իրավիճակների փորձարկմամբ, որը թույլ է տալիս երիտասարդներին սովորել ներսից: Մա արդյունք է, որին մենք հասել ենք ամեն վարժությունում. մասնակիցները փորձարկել են մի տեսանկյուն, որը երբեմն նրանցը չէ, նրանք կարողացել են անդրադարձ կատարել կարևոր սոցիալական խնդիրներին և միասին հանգել ճշմարիտ հետևությունների: Հստակ է այն , որ այս մեթոդը հասնում է ողջ կյանքի ընթացքում սովորելու գաղափարին, անձը դրան չի հասնում` որպես հայեցակարգ, այլ պահում է դա, որպես փաստ, որպես զգացմունք, որովհետև նա դա զգացել է հենց իր սեփական անձի վրա: Երիտասարդները, ովքեր մասնակցել են, մեծ հետաքրքրություն են ցուցաբերել վարժությունների նկատմամբ, իսկ գնահատման փուլերի ընթացքում նրանք կարողացան առավել խորը հասկանալ, թե ինչ էին իրենք անում` ձեռք բերելով հնարավորություն փոխել կարծիքը որոշակի խնդիրների վերաբերյալ կամ գտնել ստեղծագործ նոր լուծումներ հին խնդիրներին:



Ոչ ֆորմալ կրթությունը (ՈՖԿ) արժեքավոր գործիք է կրթության բնագավառում: Այն մեծ նշանակություն ունի մարդկանց առօրյա կյանքում: Միջմշակութային բնույթ ունեցող այս ձեռնարկն Իտալիայի, Ֆրանսիայի, Հունաստանի և Հայաստանի գործընկերների միջև ծավալված համագործակցության արդյունք է: Ձեռնարկի նպատակն է զարգացնել ՈՖԿ-ն բնագավառում փորձի վերագրային փոխանակումը երիտասարդների հետ, իրագրելով դրա կարևորության մասին և մշակել գնահատման նոր գործիքներ, որոնք օգտակար կլինեն դրա արժեքը և ազդեցությունը պարզելու համար:



CENTRO PER LO SVILUPPO CREATIVO
"DANILO DOLCI"
PARTINICO - PALERMO



“Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրախորհրդի կողմից: Մույն հրատարակությունն արտացոլում է միայն հեղինակի տեսակետը, և Եվրախորհուրդը որևէ պատասխանատվություն չի կրում դրանում տեղ գտած տեղեկատվության կիրառման համար”:

